# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՅՓԻՍԵՔ ՍՊԸ-Ն ՋՈՒԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/01 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 3 | Զգեստապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18մմ հաստությամբ ФSU-ից, գույնը՝ հաճարագույն, արտաքին չափսերը՝ 1350x458x1800մմ (LxԽxԲ): Զգեստապահարանը բաժանված է երեք ուղղահայաց հատվածների, որոնցից մեջտեղինը իր հերթին բաժանված է 5 հատվածի: Բաժանման շերտ հանդիսացող ФSU-ները հենվում են մետաղական հենակների (полкадержатель) վրա: Ձախ և աջ հատվածները փակվում է իրար հակառակ բացվող դռներով: Դռներն ամրացվում են 3-ական բարձրորակ ծխնիներով: Դռները կունենան մետաղական բռնակներ, որոնց երկարությունը պետք է լինի առնվազն 100մմ: Դռների փակման հատվածներում ամրացվում են հարվածը մեղմացնող փոքր, սիլիկոնե սահմանափակիչներ: Ձախ և աջ կողմերում՝ վերևի հատվածներում ամարցվում են կախիչների համար նախատեսված 3/4 դյույմանոց քրոմապատ, մետաղական երկաթյա ձողեր՝ համապատասխան ամրացումներով: Բոլոր եզրերը շրջափակվում են 0.4-1.2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), բացառությամբ հատակին հպվող հատվածների, նույն ФSU-ի գույնի: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված պտուտակներով: Հետնապատը պետք է լինի 3 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և նույն ФSU-ի գույնի: Զգեստապահարանները պետք է տակից ունենան 6 կարգավորվող մետաղական ոտքեր: Ապրանքը պետք է լինի նոր՝ չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, 7-րդ հարկ բարձրացնելը, տեղադրումը իրականացվում է Վաճառողի կողմից: Երաշխիքային ժամկետ՝ առնվազն 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի |

| | |
|---|---|
| | կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում (դետալների փոխարինում) կամ ապրանքը փոխարինել նորով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԱՅՓԻՍԵՔ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՋՈԼԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/01 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 3 | |